

ՀՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐՅԱՆ. «1700-ԱՄՅԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՆՈՐ ԿԱՍՈՒՐՁ ՍՓՅՈՒՌ-ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿՈՒ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ»

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի գլխավոր հանդիսությունները տեղի կունենան սեպտեմբերի 20-23-ը, որոնց կմասնակցեն շուրջ 20 քույր եկեղեցիների պետեր ու պատվիրակություններ, (այդ թվում արևելյան դավանակից եկեղեցիների պետերը, ռուս ուղղափառ եկեղեցու գահակալը, հույն, ռումին, վրաց ուղղափառ եկեղեցիների պատվիրակությունները, անգլիկան եկեղեցու արքեպիսկոպոսը եւ ուրիշներ:) Այդ օրերին Մայր Աթոռ կժամանեն նաեւ մեծանուն բարերարներ, հազարավոր ուխտավորներ՝ Ամերիկայից, Եվրոպայից եւ այլ վայրերից:

Սեպտեմբերյան այս հանդիսություններին անմիջապես կհաջորդի 1700-ամյակի առիթով Հռոմի կաթոլիկ եկեղեցու պետ Հովհաննես Պողոս Երկրորդ պապի, ապա՝ ավելի ուշ, Կոստանդնուպոլսի հունաց Տիեզերական պատրիարք Բարդուղիմեոս Առաջին պատրիարքի այցելությունները Հայաստան:

Բոլոր այս հանդիսությունները պատշաճ կազմակերպելու նպատակով Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի նախաձեռնությամբ ստեղծված է 12 աշխատանքային հանձնախումբ, որոնք գործում են 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար Հովնան արք. Տերտերյանի անմիջական ղեկավարությամբ:

Աշնանային տոնակատարությունների եւ դրանց կազմակերպման հարցերի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ հաղորդեց Հովնան Սրբազանը:

**Մյուռնոսիները՝ սեպտեմբերի 22-ին,
Սբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցու օծումը՝ սեպտեմբերի 23-ին**

Հայոց մեծ դարձի 1700-ամյա հոբելյանի գլխավոր տոնակատարությունների սկիզբը կազդարարվի սեպտեմբերի 20-ին՝ Երեսանի Վազգեն Սարգսյանի անվան մարզադաշտում կայանալիք ժողովրդական մեծ հանդեսով, որին իր մասնակցությունը կբերի 17 հազար հայաստանցի մանուկներից բաղկացած միացյալ երգչախումբը:

Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 21-ին, կազդարարվի նաեւ պաշտոնական տոնակատարությունների սկիզբը: Առավոտյան Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ եւ Սբ. Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ Մայր Աթոռ ժամանած եկեղեցու պետերը կառաջնորդվեն Խոր Վիրապ՝ հայոց պաշտելի սրբավայրը, որ առանձնանում է իր նշանակությամբ ոչ միայն հայերի, այլեւ ողջ քրիստոնյա աշխարհի համար, սրբավայր, որտեղից Գրիգոր Լուսավորիչը Քրիստոսի լույսը տարածեց ու սփռեց համայն Հայաստանում: Առ Աստված բարձրացված աղոթքից հետո, քրիստոնյա եկեղեցիների պետերի եւ պատվիրակությունների մեծահանդես թափորը Խոր Վիրապից կմեկնի Ծիծեռնակաբերդ՝ 1915թ. հայոց ցեղասպանության զոհերի հուշարձան:

«Մեզ համար մեծ նշանակություն ունեն այս երկու այցելությունները: Եթե Խոր Վիրապը խորհրդանշում է հայոց քրիստոնեական ծնունդը, ապա Ծիծեռնակաբերդը հայ ժողովրդի հարության խորհրդանիշն է: Եւ երբ յուրաքանչյուր քույր եկեղեցի պաշտոնապես ճանաչում է հայոց ցեղասպանությունը, դա մեզ գորացնում է եւ հաստատում մեր ազգային իրավունքները»,- նշեց Հովնան Սրբազանը:

Նույն օրը ՀՀ նախագահի հրավերով պատվարժան հյուրերը Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ ներկա կլինեն Հայաստանի անկախության 10-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստին եւ պաշտոնական ընդունելությանը:

Հագեցած են նաև հաջորդ երկու օրերը, երբ կօրհնվի սրբալույս մյուռոնը և կօծվի Երեւանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ նորակերտ Մայր Եկեղեցին:

Սեպտեմբերի 22-ին Սբ. Էջմիածնի նորակառույց Բաց Խորանին ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետի տեղի կուներնա 21-րդ դարի առաջին մյուռոնօրհները, որին կնախորդի ուխտավորաց Սբ. Պատարագը՝ Սբ. Էջմիածին ժամանած տասնյակ հարյուրավոր ուխտավորների մասնակցությամբ:

«Այս մյուռոնօրհները բացառիկ է: Առաջին անգամ է, որ եկեղեցական արարողությանը մասնակցում են այդչափ մեծ թվով՝ գրեթե 20 քույր եկեղեցիների պետեր և պատվիրակություններ: Դա երեւոյթ է ինքնին», - ասաց Հովնան արքեպիսկոպոսը:

Մյուռոնօրհների արարողությանը Ամենայն Հայոց Հայրապետի կողքին կլինեն նաև Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսը, Երուսաղեմի եւ Կ. Պոլսի հայոց պատրիարքները:

Նույն օրն առավոտյան Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Մայր Տաճարում տեղի կուներնա միջեկեղեցական արարողություն, որի ավարտից հետո Վեհարանի հանդիսությունների դահլիճում քույր եկեղեցիների պետերն ու ներկայացուցիչները իրենց շնորհավորանքն ու բարեմաղթանքը կփոխանցեն Ամենայն Հայոց Հայրապետին՝ Հայ եկեղեցու մեծ տարեդարձի առիթով:

Կիրակի, սեպտեմբերի 23-ին մեծ հանդիսավորությամբ կօծվի Երեւանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցին: Հոյակերտ այս եկեղեցին, որ կառուցվեց 1700-ամյակի առիթով, Ամենայն Հայոց երեք Հայրապետների դրոշմն է կրում: Վազգեն Ա եւ Գարեգին Ա երջանկահիշատակ նախորդների նվիրական երազն ի կատար ածեց Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսը, ավարտին հասցնելով եկեղեցու կառուցումը: Մեկ տարի առաջ Նորին Սրբության հանդիսապետությամբ օծվեցին եւ տեղադրվեցին եկեղեցու խաչերը, իսկ սեպտեմբերի 23-ին կսրբագործվի Մայր եկեղեցու Սբ. Սեղանը, ուր կմատուցվի անդրանիկ պատարագը:

«Այս բոլորը, պիտի հուսանք, այնպիսի խանդավառություն կստեղծի, որ իրապես նոր կամուրջ կդառնա Սփյուռք-Հայաստան երկու իրականությունների միջեւ», - լիահույս է Հովնան Սրբազանը:

Հռոմի պապի այցելության ընթացքում Երեւանի Մայր Եկեղեցում կտեղադրվեն Սբ. Գրիգոր Լուսավորչի սրբալույս նշխարները

Արարողությունների երկրորդ հանգրվանը՝ սեպտեմբերի 25-27-ը, Հովհաննես Պողոս Երկրորդ պապի այցելությունն է: Այն իր տեսակի մեջ պատմական է, քանի որ առաջին անգամ է հռոմեական կաթոլիկ եկեղեցու պետն այցելում Հայաստան:

Սրբազան քահանայապետը Վեհափառ Հայրապետի հյուրն է եւ կիջեւանի Մայր Աթոռում: Այցելության երկու օրերի ընթացքում նախատեսվում են 5 գլխավոր միջոցառումներ, որի բարձրակետը Երեւանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցում սեպտեմբերի 26-ին կայանալիք էկուներնիկ արարողությունն է: Արարողության ընթացքում Մայր Եկեղեցում հանդիսավորապես կտեղադրվեն հայոց առաջին կաթողիկոսի՝ Սբ. Գրիգոր Լուսավորչի սրբալույս նշխարները, որոնք ավելի քան կես հազարամյակ պահվում էին Նեապոլի Սբ. Գրիգոր Հայի տաճարում: Մասունքներն անցած տարի Ամենայն Հայոց Հայրապետի Վատիկան կատարած այցի առիթով նորին Սրբությանն էր հանձնել Հռոմի կաթոլիկ եկեղեցու պետը՝ որպես վկայություն քույր եկեղեցիների միջեւ եղած սիրո և եղբայրության:

Նույն օրը Հռոմի պապը Սբ. Էջմիածնի Բաց Խորանին կմատուցի Սբ. Պատարագ: Առավոտյան Հռոմի պապն իր առանձին պատարագը կուներնա նաև Մայր Տաճարում:

Այցելության վերջին օրը՝ սեպտեմբերի 27-ին, կաթուղի քահանայապետը կմեկնի Ծիծեռնակաբերդ եւ Խոր Վիրապ, հայոց սրբավայրից իր հետ տանելով Սբ. Գրիգոր Լուսավորչի կանթեղի լույսը:

Այցի ընթացքում պապը հանդիպում կունենա նաեւ ՀՀ նախագահի հետ:

1700-ամյակի առիթով Մայր Աթոռ կայցելի Կ.Պոլսի հունաց Տիեզերական պատրիարքը

Եզրափակիչ հանդիսությունները տեղի կունենան հոկտեմբեր 28-ից նոյեմբերի 4-ը: Այդ օրերին 1700-ամյակի առիթով Սբ. Էջմիածինը կհյուրընկալի Կ.Պոլսի հունաց Տիեզերական պատրիարք Բարդուղիմեոս Առաջինին:

1700-ամյակին է նվիրվում նաեւ այդ օրերին կայանալիք «Եկեղեցի-պետություն» թեմայով միջազգային գիտաժողովը, որին իրենց մասնակցությունը կբերեն աշխարհի տարբեր եկեղեցիներ ներկայացնող երկու տասնյակից ավելի գիտնականներ:

Այդ ընթացքում տեղի կունենա նաեւ 1700-ամյակի գործադիր վարչության եզրափակիչ ժողովը: Այն կարճանագրի մի նոր շարժման սկիզբը՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում երիտասարդական կենտրոնի ստեղծումը, որպես արդյունք 1700-ամյակի շրջանակներից ներս ծայր առած երիտասարդական ուխտագնացության: Սա, թերեւս, գործնական ու մնայուն ձեռքբերում է երիտասարդական ուխտագնացությունների գրասենյակի երկամյա գործունեության:

Հեղինակ՝ Մկրտչյան